ՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ
(Բանաստեղծի երազանքը)

Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իրոք, մի՞թե տարօրինակ չի հնչում Թումանյանը և ռոմանտիզմը... Հայ բանաստեղծական արվեստի ռեալիստական ուղղության ամենանշանավոր դեմքի ստեղծագործություններում ռոմանտիկականի որոնումը թվում է, թե ապարդյուն, անիմաստ ջանք է, լոկ մտքի խարկանք։ Այսպես է թվում առաջին հայացքից, մանավանդ, երբ գրողի ստեղծագործական մեթոդը դիտում ենք որպես մեկընդմիշտ կաղապարված սխեմա, առանց գրական ուղղությունների փոխադարձ ներթափանցման, անցումների։ Սակայն, բավական է խորամուխ լինել գրողի ապրած ժամանակի հասարակական կյանքի հուզող հարցերի ոլորտները, գրական երկը դիտել որպես ժամանակի հրամայական խոսք ու պահանջ, հետևաբար և պատմական երևույթ և պարզ կդառնա, որ հասարակական կյանքի թելադրանքով ստեղծագործական մեթոդի անցումը անհրաժեշտություն է դառնում անգամ արդեն որոշակիորեն ձևավորված ռոմանտիկի կամ ռեալիստի մոտ։ Տեսականորեն հնարավո՞ր են արդյոք ստեղծագործական մեթոդների մասնակի անցումներ, գրականության պատմությունը գիտի՞ նման փաստեր։ Անկասկա՜ծ։ Հայտնի է, որ ռեալիստական արվեստի այնպիսի տիտան, որպիսին Բալզակն է, գրել է ակնհայտ ռոմանտիկական «Շագրինի կաշին» վեպը, ռոմանտիկական պոեզիայի մեծագույն դեմքերից՝ Բելինսկու խոսքերով կոչենք «պոեզիայի Պրոմեթեոսը», Բայրոնը, ստեղծագործության վերջին շրջանում գրում է «Դոն Ժուան» մեծակտավ ռեալիստական պոեմը, գերազանցորեն ռոմանտիկ Լերմոնտովը միևնույն թվականին գրում է ռոմանտիկական «Մծիրի» պոեմը և «Մեր ժամանակի հերոսը» ռեալիստական վեպը։

Նմանօրինակ փաստ կարելի է նշել և Թումանյանի ստեղծագործական կյանքում։ Հարկավ, այստեղ խոսքը Թումանյանի ստեղծագործական մեթոդի՝ ռեալիզմից կատարված ռոմանտիկական մասնակի շեղումների, այն երանգների մասին է, որ նկատելի է բանաստեղծի որոշ երկերում, առանձնակի գեղեցկություն ու հմայք հաղորդելով նրա պոեզիային։

Այսպես, 1880-ական թվականներին գրած հանրահայտ «Գութանի երգը», «Հին օրհնություն», «Մարո», «Լոռեցի Սաքոն» ռեալիստական ստեղծագործություններից հետո 90-ական թվականներին սոցիալական հակասությունների սրման և հայկական հուզումների, ազատագրական պայքարի նոր շրջանում գրում է ռեալիստական «Հառաչանք» և «Հին կոիվը» ռոմանտիկական պոեմները։ Նկատենք, որ Թումանյանը մենակ չէր։ 90-ական թվականներին, արևմտահայության ազատագրական բաղձանքների, տառապանքների ու անլույս լարդերի շրջանում, հայ իրականությունը շնչում էր այդ ամենով։ Արևմտահայ ժողովրդի սոցիալական կյանքը պատկերող Վ. Փափազյանի, Ա. Ահարոնյանի ցնցող պատմվածքները, Թումանյանի «Հին կոիվը», Իսահակյանի «Դև սուլ-

թանը և մանուկ Հայաստանը» պոեմները հայկական արյունոտ դատի գեղարվեստական մարմնավորումն էին։ Այդ գրականության և կյանքի, գրողի և ժողովրդի բախտի միասնության արտահայտությունն էին։ Սկզբնավորվելով դարասկզբին, հայկական ռոմանտիզմը իր զարգացման բարձրակետին հասավ Պատկանյանի և Ռաֆֆու ստեղծագործություններում։ Ռաֆֆու և Պատկանյանի ազատաբաղձ, մարտաշունչ ռոմանտիզմի պաթոսը սուլթանիզմի լծից հայության ազատագրությունն է։ Ռաֆֆու և Պատկանյանի բուռն ստեղծագործական տարիներին և նրանցից հետո, արևմտահայ ազատագրական շարժումը ծավալվում էր հայ ժողովրդի համար ծայրահեղորեն աննպաստ քաղաքական հանգամանքներում։ Համընդհանուր հուսահատության, հիասթափության և նվիրական վսեմ բաղձանքների խորտակման զառ խոստովանություն է 90-ական թվականներին գրած Թումանյանի «Հին կոիվը» պոեմի նախերգանքը.—

Մենք կարծում էինք թե իր շանթերով
Հսկում է աստված Սասմա սարերին,
Մենք ասում էինք՝ անթիվ նավերով
Կգան օգնության մեր ծանր օրին...
Ավա՜ղ, մեր պայծառ հույսերի համար,
Ահա խորտակված և ահա կրկին
Նայում ենք անհույս, մենակ, գալկահար՝
Մորթող թշնամու արյունոտ ձեռքին։

Իդեալի և իրականության խոր հակասությունից, իդեալի իրականացման անպատմելի դժվարությունից է սերվում ապագայի վառ երազանքը։

Հայկական ռոմանտիզմի զարգացման շղթան Ռաֆֆու մահով չի ընդհատվում. 90-ական թվականներին թեպետ և ոչ նախկին ուժով, այնուամենայնիվ, որպես կենսունակ ստեղծագործական մեթոդ, ռոմանտիզմը շարունակում է իր գոյությունը և՛ սոցիալական հարաբերությունները, և՛ ազատագրական կոիվը պատկերող հեղինակների՝ Մուրացանի, Փափազյանի, Ահարոնյանի երկերում։ Թումանյանի «Հին կոիվը» պոեմը, մեր կարծիքով, հենց այս կարգի երկերից է, արևելահայ ռոմանտիկական պոեզիայի թերևս վերջին մեծակտավ երկերից մեկը։ Չի կարելի Թումանյանին կտրել նախորդ շրջանի հայ գրականության զարգացման ընդհանուր շղթայից, առավել ևս չի կարելի գաղափարական սեպ խրել և արհեստականորեն նրան բաժանել Պատկանյանից և Ռաֆֆուց։ Երիտասարդ Թումանյանը իր մեծ նախորդներից ժառանգել է նրանց բարձր հայրենասիրությունը, ժողովրդասիրությունը, ազատագրական կռվի վեհ իդեալները, ինչպես և կերպարի ռոմանտիկական պատկերման, ռոմանտիկական մտածողության առանձին մոմենտներ, երանգներ, որոնք դրսևորված են «Հին կոիվը» պոեմում։ Պոեմի հերոս Վահանը հայ ռոմանտիկական վիպագրության հերոսների այն սերնդից է, որ անմահացվեց Ռաֆֆու հոչակավոր վեպերում։ Վահանի համար գերագույն երջանկությունը կյանքը հայրենիքին նվիրաբերելն է։ Տարեց ծնողների համար անհասկանալի, խորհրդավոր է նա ընկերական շրջապատով, հայրենասիրական խոհերով ու արարքներով։ Վահանը մեկն է այն անձնազոհ հերոսներից, որ կարող էր ծնել այս և նախորդ տասնամյակի հայ իրականությունը։

Աշխարքի դարդը շալակն է առել,
Ամենքի համար դարդաքաշ դառել.

Այսպես է տղային բնութագրում ծերունի հայրը։ Եվ մի օր էլ անսպասելիորեն հայրենասեր երիտասարդը անհետանում է, ծնողներից գաղտնի մեկնում է Արևմտահայաստան։ Անհանգստանում են հարազատները. ոչ մի լուր տղայից։ Առժամանակ հետո նրանք ստանում են Վահանի հուղիչ նամակը. «Այս նոր ու ահեղ ցավի աշխարհում, ...իմ կյանքը իմ՝ը չի, իմ սիրտն իմը չի»,— գրում է նա։ Վահանի համախոհները ևս նրա պես հախուռն հույզերով, անձնվեր հայրենասեր երիտասարդներ են, ազատության, ժողովրդի բարօրության, կյանքը գրավ դրած անանուն գաղափարական հերոսներ։ Իզուր չէ, որ նրանք իրենց կոչում են «ազատության ոգիք»։ Նրանք երգվում են իրենց ջահել կյանքը նվիրել «սև սարերի ետևում» տանջվող ժողովրդի ազատության, լավ օրվա համար։

Հե՜յ, գալիս ենք ո՜վ տանջվածներ,
Գալիս ենք մենք զինավառ,
Ե՜վ ազատ օր և կյանք, և սեր
Ողջ բերում ենք ձեզ համար։

Որքան նվիրական ու վսեմ, որքան ազնիվ, նույնքան և կարելի է ասել անհնարին, երազային էին իդեալի իրականացման ռեալ հնարավորությունները։ Այստեղից սերվում է ռոմանտիկականը։ Եվ «Հին կոիվը» պոեմի հերոս Վահանը, մեր կարծիքով, ռոմանտիկ կերպար է, զույգվարատիպ։ Նա միջավայրից վեր բարձրացած խռովահույզ անհատ է։ Վահանը զերծ է անհատական նկարագրից։ Բանաստեղծը չի պատկերել կերպարն անհատականացնող մանրամասները։ Նույնը պետք է ասել և Վահանի համախոհների մասին։ Ազատության և բռնության հակադրության ու բախման վրա են խարսխված պոեմի անձնական և հասարակական հանգույցները։ Թումանյանի «Հին կոիվը» բացահայտում է ոչ միայն հայկական ռոմանտիզմի ազատագրական բովանդակությունը, այլև կենսունակությունը, տևականությունը։ Ցավոք, այն ամբողջությամբ մեզ չի հասել։ Տպագրված հատվածները կասկած չեն հարուցում, որ այն կլիներ մեր ժողովրդի մղած ազատագրական հերոիկայի ու կրած տառապանքի գեղարվեստական մի հոյակապ կոթող։

Ռոմանտիզմի տեսաբանները երազանքը համարել են ռոմանտիկական արվեստի կարևոր առանձնահատկություններից մեկը։ Կյանքում չգտնելով իդեալի իրականացման ռեալ ուղիներ և հնարավորություններ, գրողը փարվում է ապագային, մտովին ստեղծում այն գյուտիչ իրականությունը, որ համապատասխանում է իր իդեալին։ Միանգամայն ճիշտ է հայկական ռոմանտիզմի հետազոտող Ս. Սարինյանի միտքն այն մասին, թե «այն ինչ առհասարակ բնորոշ է ռոմանտիզմի ընդհանուր մտայնությանը, դա նրա ուտոպիական բնույթն էր, նրազայնությունը» (տե՛ս «Հայկ. ռոմանտիզմ», էջ 11, 1966 թ.)։ Բաֆֆու «Խենթը» վեպի հանրածանոթ Վարդանի երազը վերոհիշյալ մտքի փայլուն ապացույց կարող է լինել։

Հայ բանաստեղծական արվեստում ոչ մի գրողի հասարակական իդեալը՝ ազատ, լի կյանքի, մարդու երջանկության մասին երազանքն այնպես ցայտուն պատկերում չի ստացել, ինչպես Թումանյանի պոեզիայում։ Անշուշտ, այդ զուրկ չէր հասարակական հիմքից։

Բանաստեղծի լայնահուն ու զգաստ ռեալիզմը հարստանում է ռոմանտիզմի տարրերով, երանգներով, գյուտիչ երազայնությամբ, որոնք առանձնակի գեղեցկություն ու հմայք են հաղորդում նրա պոեզիային։

1913 թ. Վահան Տերյանին նվիրված ելույթում, Թումանյանը խոսելով նրա ստեղծագործության մեջ տոկա մշուշի, թախծի ու տրտմության մասին, այն խոր միարն է արտահայտում, թե «թախիծն ու երազը խորթ չեն հայի հոգուն, և մենք շատ երազկոտ ժողովուրդ ենք»: Երազկոտ ժողովո՛ւրդ... ի՞նչ լավ չասված։ Այդ մեր ժողովրդի ազնվության վկայագիրն է։ Դարեր շարունակ հայ ժողովուրդը պայքարել է խաղաղ, ստեղծագործ, ազատ, ինքնուրույն կյանքի համար։ Ազատությունը եղել է նրա մշտավառ իդեալը։ Եվ դարեր շարունակ անկատար է մնացել նրա իղձը։ Որքան ծանր է եղել ժողովրդի պատմության արյունոտ երթուղին, այնքան ամուր է նա փարվել ազատության, ազատ կյանքի երազանքին։ Այո՛, անվերջ պայքարելու, որոնելու և չգտնելու ձգտումը ժողովրդին ու նրա բանաստեղծին երազկոտ են դարձրել։ Լավ է ասել բանաստեղծը.—

Երազեցի շարունակ,
Իմ կյանքի մեջ ես մանկուց...

Ապագայի վառ երազանքը լուսավորել է ժողովրդի արյունոտ պատմության բառուղին, խանդավառել, հավատ ներշնչել բանաստեղծին։ «Հայոց լեռներում» խորունկ, սքանչելի բանաստեղծության մեջ (նախերգանքը «Հին կռիվը» պոեմի երկրորդ մասի) պատկերված է հայ ժողովրդի հերոսական, հավաքական կերպարը, նրա դժվարին արյունոտ երթուղին, ծանր, կոշմարային անցյալին ու տխուր ներկային հակադրված է դյութիչ ու պայծառ կանչող երազային դալիքը։—

...Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռո՛ւ աստղերին
Երկնքի ծերին.
Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներո՛ւմ.
Կանա՞չ լեռներում։

Այստեղ գեղարվեստական հոյակապ մարմնավորում է ստացել բանաստեղծի երազանքը, որը դաժան անցյալի ու ծանր ներկայի ժխտումն է։ Ժողովրդի ստեղծագործական ուժերի նկատմամբ բանաստեղծի անկոտրում հավատը, նրա երազանքին իրական բովանդակություն է հաղորդել և այն մեզ պատկերանում է որպես հաստատ լինելիություն, որպես նվաճվելիք իրականության։ Մեծ պատերազմի թոհ ու բոհի, ժողովրդի զանգվածային ջարդի ու տեղահանության, հայրենիքի մոխրացման տարիներին անգամ, բանաստեղծը նահատակ ժողովրդի հոգեհանգիստը կարգալով բնավ չի գաղարում երազելուց։

...Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած... Հետագա տարիներին գրած մի քառյակի խոսքերը՝ թե «Ու երջանիկ ակունքներին երազուն, պոետները տենչում են ու անց կենում»։ 1917 թ. կոնկրետ գեղարվեստական մարմնավորում է ստացել նրա հայտնի քառատողում.

Իմ մուրազը շատ էր շքեղ
Դրրախտ պիտեր քաղաք ու գեղ
Սրգը հոսեր հառաչքի տեղ,
Սերս ու բարին Արագ, Անուշ

Բանաստեղծը անդուսպ սիրով երգում է ոչ միայն իր տարաբախտ ադդի, այլ հանուր մարդկության համար։ Խոր մարդկայնությամբ հագեցված շքեղ այդ երգանքը բացահայտում է Թումանյանի բարձր հումանիստական իդեալը, դեմոկրատական աշխարհայացքը։

Արվեստագետի երգանքը հակադրությունն է արյունոտ իրականության։ Եվ որքան ծանր է ներկան, որքան անորոշ ու հարցականներով լի, այնքան անպարփակ ու մեծ. այնքան շքեղ է մարդու և մարդկության ապագայի մասին բանաստեղծի երգանքը։

Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն,
Երգի մեջ երջանիկ
Հաշտ ու խաղաղ մարդկություն։

Համաշխարհային պատմական մեծ դեպքերի ու ահեղ ցնցումների ժամանակ արտահայտած բանաստեղծի երգանքը բացահայտում է նրա անհանդիստ տանջալիորեն միշտ որոնող միտքը, հումանիստական աշխարհայացքը, ժողովրդի, մարդու նկատմամբ տածած խոր սերը։